



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԻՔԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 26 ՆՈՅԵՄԲԵՐ 1877

ԹԻՒ 1080

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յորմէ հետէ՝ Կարսն Ռուսաց ձեռքն անցած է քաղաքային կացութիւնն նոր փոփոխութիւն մի չընկալաւ, կրօն Գաղղիոյ Տէպա օրագիրն, բայց ուշագրութեան արժանի կը համարի այս ծանր դէպքին արդեցութիւնն, որ տեղի ունեցաւ Եւրոպիոյ մէջ և մասնաւորապէս Անգղիոյ և Աւստրիոյ մէջ։ Լոնտօնի Մօրնինկ—Բոսթ, Սթէն-տէրթ և Տէյի Թէլէկրաֆ օրագիրքն չեն ծածկեր իրենց երկիւղը այլ ընդհանրական առաջին յայտնիկ լրագրաց կրօն թէ Ժամանակն արդէն հասեալ թէ թող տալու զէջըութիւնն և զանգ որով թիւնն օրոյ մէջ յարատեւն քաղաքային խեղագարութիւն մի է քանզի Թուրքիոյ ամբողջութիւնն Արիոյ մէջ նայն իսկ Անգղիոյ ամբողջութեան պատուարն է։ Տէյի Թէլէկրաֆ օրագիրն միևնոյն երկիւղը զգածեալ այսպէս կրէ «Թուրքիոյ Հայաստանի կողմանէ կատարելապէս պիտի բառնայ զանգղիական ազդեցութիւնն Արևելքի մէջ»։ Իսկ Սթէնտէրթ օրագիրն կըստիպէ զանգղիական կառավարութիւնն փութալ ազդու միջոցներ ձեռք առնուլ և չպատել անկմանն Բէլձայի։ Միայն Թայմզ օրագիրն ամեն կերպիւ կաշխատի հաստատուն պահել զԱնգղիան յանգործութեան իւրում և ծածկել զկարելի վտանգն։

Յառաջ բերուած այս տողերէն յայտնի կըսենուն թէ Անգղիան վերջապէս պիտի պարտաւորի զինու զօրութեամբ պաշտպանել զամբողջութիւնն Թուրքիոյ քանզի այս ամբողջութեան

թիւնն ըստ ասութեան Մօրնինկ—Բոսթ օրագրոյն, նոյն իսկ Անգղիոյ ամբողջութեան պատուարն է։ Անտարակոյս մեծ արժէք ունի Անգղիոյ զինուորական պարագիցութիւնն ի պաշտպանութիւն ամբողջութեանն Թուրքիոյ, այսու ամենայնիւ յատուկ նշանակութեան արժանի է թէ Բարձրագոյն Դուռն տակաւին իւր ամեն զօրութիւնքն չէ սպառած և կարող է Աստուծոյ ողորմութեամբն, յետո մէջ իւր նորակազմ զօրաբանակաւ զյառաջալ ընթացքն թշնամւոյն բայց եթէ օսմանեան կառավարութեան և օսմանեան ազդին այս վերջին ճգնաժամից լինի Անգղիան զինու զօրութեամբ, այս դործակցութիւնն որչափ որ նպաստամտոյց պիտի լինի Թուրքիոյ նոյնչափ և օգտակար Մեծին Բրիտանիոյ շահուցն ըստ վկայութեան իսկ անգղիական լրագրաց։

Հրապարակական ահագին ժողովներ (միթինկ) կը կազմուին ի Լոնտօն բազկացեալ յատկապէս ի պատգամաւորաց գործաւորաց դասուն նմանապէս ի հիւսիսային գաւառս Անգղիոյ և մասնաւորապէս ի Նիւքէսթլ մետաղագործական և հանքային ածխոյ մեծամեծ հաստատութեանց մէջ։ Այս ժողովոց մէջ, նմանապէս անգղիական ուրիշ բազմաթիւ գործարանաց մէջ աղերսադրեր կըստորագրուին առ ի խնդրել ի վեհափառ Թագուհոյն, որ պատերազմ հրատարակէ ընդդէմ Ռուսիոյ։ Միւս կողմանէ միտար կրէաւթիւն և բարեկամք իւր, որք փորձ կը փորձեն Թուրքիոյ հակառակ հրապարակական յայտարարութիւններ կարգադրել Անգ-

ղիոյ մէջ, ամենին չյաջողեցան ի հակաօսմանեան ճգունս իւրեանց։

Ի հաստատութիւն վերոգրեալ տողից՝ արժար կը համարուի յառաջ բերել զհետեւեալ հեռագիրն՝ զոր Մէքլէն հեռագրական գործակալութիւնն (Agence Maclean) կը հաղորդէ Եւրոպիոյ լրագրաց։

Լոնտօն, 23 Նոյ. (Ն. Թ.)
Ի Պոմպոյէ աստ հասեալ հեռագիր մի ծանուցանէ թէ Հնդկաստանի Միւսուլման ժողովուրդն ի մեծի տխրութեան դտանի իմանալով զնոր ձախորդութիւնն Թուրքիոյ բաղձութիւ հրապարակական ժողովը Միւսուլմանաց տեղի ունեցան յանցելու մի Պոմպոյէ և ի կալկաթա, և աղերսադրէ յաղարկեցան առ կայսրուհին Հնդկաց՝ այսինքն առ վերջորիս Թագուհին խնդրելով զօրաժողով մի ի Մահմեդական անդղիոցի հողատակաց ի նպատու Բիրան։ Պոմպոյէ Միւսուլման հաստարակութիւնն փութացաւ յանձնել ձեռամբ օսման դեպքանին Լոնտօնի, 400,000 Քրանք օգնութեան Մետուկին վտան թուրք վերաւորաց և հիւանդաց։

Ի Կ. Պոլսոյ Նոյեմբեր 22էն արձակեալ հեռագրէ մի իմանալք թէ Մէհմեդ Սիւփա զօրապետն մեծ յաղթութիւն մի տարեր է Ռուսաց վերայ Օրխանիէի առջև։

Դարձեալ ի նոյն մայրաքաղաքէն Նոյմ. 23 ամսաթուով յուղարկեալ հեռագիրք հետեւեալ տեղեկութիւններն կուտան։

«Մոֆիայէն հասեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ Ռուսք այսօր վերստին սկսան յարձակիլ ի վերայ Օսմանեան գրից որ ի Գամարլը»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌ ՎԱՂԱՄԵՌՈՒԿՆ ԴԱՐՈՒՀԻ ՍԻՐԱՍՈՒՆ ԴՈՒՍՏՐ

Վսեմադուք Թագաւոր—Պէյի Յակոբեան Զմիռնացոյ յԱղբաւնդրիս։

- Հրեշտակ Դարուհի, Թուանիս ուր Աշտանակեալ ի կառս հուր.
- Ես թըռանիմ յերկինս ուր Հրեշտակք պարեն յերգըս բիւր։
- Հրեշտակ Դարուհի, ուր ըզհայր Բոյին թողուս և ըզմայր.
- Թողում զնոսա աստ ի վայր Կեալ երջանիկ ամս յամար։
- Հրեշտակ Դարուհի, զի յանկարծ Մեկնիս յաստեաց տարակարծ.
- Լըքեմ զաշխարհ սընտարծ ես Արարչիս սիրարծարծ։
- Հրեշտակ Դարուհի, զի փութաս, Գաւեակ և կէս ամօք կեաս.
- Չէ փոյթ, զի կեանք յաւիտեանս կան ինձ յերկնից սուրբ խորանս։
- Հրեշտակ Դարուհի, կայ մնա, Գեղ զարդս երկնէ Եւրոպա.
- Ինձ զարդ երկնիք են ահա. Աշխարհ սուտ է առ յաղա։
- Հրեշտակ Դարուհի, քեզ նեղոս իւղ ապ և մեղր մշտահոս.
- Ես յանթարչամ գըրախտին սօս նուիրեցայ բարեխօս։
- Հրեշտակ Դարուհի, քեզ բուրեան Դալիւնք երկրի կան մնան.
- Անեղծ ծաղկունք ոլմպեան Գաւ եղին ինձ արիեան։
- Հրեշտակ Դարուհի, աւաղոյթ

- Գեղ մնան և ալեոյթ.
- Դիւրեղծ փառաց հաւաքոյթ Պատիր են միշտ, ինձ չէ փոյթ։
- Հրեշտակ Դարուհի, քեզ գաւնակ Մշայ ոսկի ի քանդակ.
- Ի քնար անմահ գերունակ Ճարտար խաղայ իմ մասնեակ։
- Հրեշտակ Դարուհի, քեզ Գարուն Վարդս յօրինէ երփնագոյն.
- Յաւերժական է Գարուն Անդ ի յերկնից սրբատուն։
- Հրեշտակ Դարուհի, գեղ և շուք Պճնեն զհասակ քո անդոյգ.
- Գեղ երկնային կրկնաւոյգ Ձիս զարդարեաց յանեղծ շուք։
- Հրեշտակ Դարուհի, ինձ աւաղ Որ հարսանեացդ կայի վաղ.
- Իմ առադաստ լուսաշաղ Երկնից եղաւ կայս խաղաղ։
- Հրեշտակ Դարուհի, զի կան լուռ Իո երկթ երթիք կարմրաթոյր.
- Ընդ սրբերդուաց դասուց բիւր Օրհնեմ զՈրհնն համապիւռ։
- Հրեշտակ Դարուհի, քո աշեր Ընդէր չիջան յայդ հրաւեր.
- Ի լոյսն անմահ անստուեր Հրաշանամ ես աւտ ի վեր։
- Հրեշտակ Դարուհի, լուր ձոյնի Բոց ծնողաց փարելի.
- Մի զիս լացեն, զի արդի փառք իմ նոցա չեն յայտնի։
- Հրեշտակ Դարուհի, միթար Ուր ծնողացդ բարերար.
- Որհնն ետ զիս և էառ Ի նա գոցեն միթար։

Ա. Ս. Թ.

ԱՌ ՄԵՆԱՇՈՒՔ ԾԱԿՈՒ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԵՆՏԻՍ ՍԱՐԳՍԻԱՆ

Ընդ նորոգ ես ի հիմանց կառուցումն ազգային հիւանդանոցի քաղաքիս։

Ոչ ահեղաստատ ճամբարք մարտական, եւ ոչ իսկ պայծառ դափնիք յաղթութեան, եւ ոչ քաղաքաց աւեր և կործան ճշմարիտ պարճանս տացեն մարդկութեան։

Յաղթութիւնք թուրքեալք զհետ բանակաց Ձինչ ի տեսարան հանցեն աշխարհաց, Բայց թէ կործանումն աւանայ բազմաց, Արտօսը, հեծութիւնք օրոց և այլեաց։

Ոչ ի ձեռնարկին մեծութեան չափի ճշմարիտ պարճանք մարդկային սեռի. Այլ որ ընթակիցն հանրութեան օգտի Այն ժառանգեցէ պարճանաց դափնի։

Յակոբ, Յովհաննէս կրկին հարազատք Սրարդալեան տոհմին պարճանաց պատիւ, Յօգուտ աղքատաց Ձեր վսեմ ձեռնարկ Օրհնութեամբ անշուշտ յիշել ունին դարք։

Դուք որ ի բարձուէ պերճութեանց բազդին Սփոխել ջանայք զվիշտ աղքատին՝ Մրմունչք օրհնութեանց անտէր հիւանդին վերելակեցեն յունկըն Ամանահին։

Թշուառք, որ մնայք դիւր և դարմանի Անդր ի նորաչեն հիւանդանոցի, Մաղթեցէք զդուք Ամենակալի Պահել զտերունդ Սրարդալեանի։

Մաղթեցէք զՏէր զի մի ոհ կրկին Դժբաղդ արկածիւք (1) փորձեցէ զնոսին, Մաղթեցէք զի մի հովանիք սոցին ի դժբաղդ գլխոց ձեր պակասեցին։

Զմիւռնիա, 11—23 Նոյ. 1877

(1) Ակնարկի ի ման առաքինագարդ Պ. Մարտիրոս սի Յ. Սրարդալեան, որ ամառ միով յառաջագոյն Լաւրանեցաւ ի ծաղկի հաւաքին։

Բարձրագոյն հրամանաւ, Օսմանեան երեսփոխանական խորհրդարանն Գեղեթմբեր 1—13ին պիտի բացուի :

Կայսերական զօրաւորական գրաւեց Էլէնայի գիրքը՝ ձեռք ձգելով 13 թնդանօթ և գերի բռնելով 300 զինուոր : Բայ յայտմանէ Ռուսք 3000 մեռեալ ունեցան այս պատերազմին մէջ :

Բարձրագոյն Դուռն որոշելով առայժմ քաղաքապահ զօրք առնուլ յոչ—Մահմէտական հպատակաց իւրոց, փութացաւ այս որոշման համար պաշտօնական յայտարարութիւն մի հրատարակել : որոյ հայերէն թարգմանութիւնն ի փոխ. ըրազէն քաղելով կըհաղորդեմք ընթերցողաց մերոց :

«Ամենուն յայտնի է թէ երկու տարիէ ի վեր անցած ներքին ծանր անցքերն, որոց օրինակը չէր տեսնուած անցեղոյն մէջ՝ ինչպէս նաև Ռուսիոյ յարատեւ փառամտութիւնը ներկայ պատերազմն յարուցին : զոր մեր հայրենեաց իրաւունքն ու անկախութիւնն անվտար պահելու համար պարտաւորեցանք ընդունիլ : Բռնադատեալ աշխարհ կրցաւ գնահատել կայսերական կառավարութեան պարզած ջանքն մեծութիւնն և իւր հաւատարիմ հպատակներէն մինչև այսօր գտած դործակցութիւնն :

Ժամանակն եկաւ, ուր երկիրը թշնամոյն դիմադրութիւններէն ապահովելու համար՝ նախաձեռն ոգով նոր ոյժ մը տալ հարկ եղաւ այդ դործակցութեան :

Հետեւեալ կայսերական հրամանագիր մը կըհրամայէ 150,000 զօրաց պահեստի նոր բանակ մը կազմել վերջին օրերո իրաւունք և ի զէն կոչուած քաղաքային պահապան զինուորութեան հետ :

Սոյն հրամանն անմիջապէս դործող ըլլաւ համար պէտք եղած միջոցները ձեռք առնուեցան :

Ըստորում յայտնի է թէ Օսմանեան ազգին իրաւանց և արժանապատուութեան անվտար պահպանութիւնը վեհա. Սուլթանին անդուհաղածութեան նիւթ մ'է, և Ն. Կ. վեհափառութիւնն անժխտելի փորձելով համոզուած է որ իւր բոլոր հաւատարիմ հպատակներն ալ այս զգացմանց բաժանորդ են, մասնաւորապէս թեման երկիրներուն մէջ բարեկարգութիւնն ու ապահովութիւնը պահպանելու և իւրաքանչիւր իւր ծննդեան երկրին մէջ մնալով հայրենեաց պաշտպանութեան մասնակցելու : նպատակաւ սահմանեալ քաղաքային պահապան զինուորութեան պարտականութիւնները կատարելու համար ցոյց տրուած փոխը տեսնելով, և նկատելով որ ամեն Օսմանցիք ըստ Սահմանադրութեան այս պաշտօնը կատարելու կոչուած են, Ն. Կ. վեհափառութիւնն իւր բոլոր հպատակաց վայելած կատարեալ հաւատարմութեան զօրութեամբ հաճեցաւ հրամայել որ իւր ոչ—մահմէտական հպատակներն որք յատուկ կանոնադրութեան տրամադրած տարիքն ունին, Պօլսոյ մէջ կազմուելու միայ եղած քաղաքային զինուորութեան անդամակցին :

Իրաւունք կայ յուսարու թէ ոչ—մահմէտական Օսմանցի հպատակք վեհա. Սուլթանին կողմէ իւրենց ցոյց տրուած վստահութիւնն ըստ արժանւոյն գնահատուելով, պարձանօք կըփութան կատարել այն նուիրական պարտականութիւնն, առ որ հրաւիրեալ են :

Ինչպէս որ վերն ըսուեցաւ, որովհետեւ կազմուելիք պահեստի բանակն ալ երկրիս պաշտպանութեան մասնակցելու կոչուած է, և անոր մէկ մասը քաղաքային պահապան զինուորները պիտի տան, ուստի Կ. Պօլսոյ քաղաքային զինուորներն ի հարկին մայրաքաղաք պաշտպանելու կոչուած են, Անգլիանուպօլսոյ քաղաքային զինուորներն ալ նոյն քաղաքը պիտի պաշտպանեն, և եթէ հարկ ըլլայ դաւառին ուղղման տակն կէտերը, Պօլսոյն ևս ընդ :

Պահեստի բանակին համար յատուկ հրամանատար մը պիտի նշանակուի :

եան ճեմարանի բայցման երրորդ տարեդարձի հանդէսները ի 24ն Սեպտեմբեր ամսոյս ըստ արժանւոյն կատարուեցան : Նախընթաց աւուր յերեկոյեան ժամերգութեան Ս. Գէորգայ նախատեսուել կատարելոյ համար վեհափառ Հայրապետն կաթողիկոսաց յատուկ եղած նախաւանդ հանդէսով ի սուրբ հաճարն իջաւ :

Առաւօտեան մեծահանգէս ժամերգութիւնէն և հանգիստ տալէն զինի՝ սովորական Մաղթանքը կատարուեցաւ, և ապա համայն Միաբանութիւնն՝ ճեմարանական աշակերտք՝ Վաղարշապատու Ս. երկուց սեւեից դպրոցաց աշակերտք պաշտօնակալք և ժողովուրդն՝ խումբ խումբ ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի ներկայացան վեհա. Հայրապետի Ս. Ալք համբուրելով Անուանակոչութեան տօնը շնորհաւորելոյ և հայրապետական օրհնութիւնը ընդունելոյ համար : Այս առթիւ երգեր եղանակեցին և ուղերձներ մատուցին Նորին Սրբութեան, ինչպէս նաև Օրորդայ դպրոցի աշակերտուհիք իւրեանց ձեռագործած մի թիկնարարձք նուիրեցին սրտառուչ ճառախօսութեամբ :

Սոյն սրբոյ Պատարագի՝ զոր մատուց գերա. Սերովբէ եպիսկոպոս Արարատեան, բոլոր եկեղեցական դասքն զգեստաւորուած՝ (որոց առջեւն սովորական կարգով կերթային ճեմարանի աշակերտք) Ս. Էջմիածնի տաճարէն ելան թափօրով և դպիրք, նախ Ս. Գէորգայ Գաւառի և ողոր թարգմանաց Որ. Էրեւանի շարականները երգելով գնացին ի ճեմարան :

Ճեմարանի մեծ դրան առջև կամարակալին ներքեւ պատրաստուած բարձրաւանդակ Գահին առջև կանգնած էր վեհա. Հայրապետ՝ երբ թափօրը մտաւ ճեմարանի արտաքին ընդարձակ դահլիճը ժողովուրդեան բազմութեան հետ եւ կարգով շարուեցան և անմիջապէս երգուեցաւ Ուսուցիչ Գեորգ մանկունքը : Յետ այնորիկ վեհա. Հայրապետի բարեխիշատակ ծնողաց հոգւոց համար սահմանուած հանգստեան պաշտօնը կատարուեցաւ :

Երբ հանդատեան պաշտօնը աւարտեցաւ, վեհա. Հայրապետ համառօտ՝ բայց հիմնաւոր ապացոյցներով և քաջափորձ համոզելու նկատարութեան և շանտի մեր ազգին մինչև ցարդ տգիտութեան և շանտի մեր ազգին մինչև ցարդ կրած աղէտից և փորձութեանց աղաղաւ, զոր կրած անցեղոյ համար Բարդուղէ և Գաւառի բարդարման զատարարութիւնը միակ միջոց ցըրելինամ դատարարութիւնը միակ միջոց ցըրելինամ զոր ինչպէս ճանչցած է՝ նոյնպէս դործացած ու արդիւնաւորած է ինքն ուր որ գնացած և պաշտօն վարած է : յորոց մին՝ միանգամայն նշանաւորն է այս ճեմարանը, և յորդոր կարգաց զի ամեն մարդ այս վտեմ և կենսական ինքնոյ վերայ ուշադրութիւն դարձնէ, որով ոչ միայն իւրեանց զաւակաց, այլ մասնաւորապէս Հայաստանեայց եկեղեցւոյ և ազգի համար երջանիկ և բարեկոյս աշտուղայ պատրաստեն, ինչպէս որ այսպիսի յուսարից ըզիւք աւելի նուիրական և յատուկ պարտք ու պաշտօն ստանձնած է Ս. Գէորգեան ճեմարան, որոյ համար բոլոր Հայ ազգը ևս իրաւունք ունի անխեղտ յուսալ և միտքարուելու և որպէսզի հանդիսականք ևս տեղեկանան թէ որքան պատկաւած են անկախութիւնք և անցեղ շրջանում ինչ արդիւնք արտադրած է այս ճեմարան ի վերջ տեսնաբանութեանն վեհա. Հայրապետ յանձնեց ճեմարանի գերա. վերատեսուչ Գաւառիէլ արքեպիսկոպոսին և հրաւիրեց հաղորդել կարեւոր տեղեկութիւնք ներկայ գտնուող հանդիսականաց՝ որ և հետագայ ճառը ընթերցաւ, զոր ամբողջութեամբ կըհրատարակեմք ի տեղեկութիւն մեր համայն ազգայնոց :

Երբ յիշեալ ճառը աւարտեցաւ, միմեանց յանդիմանեցին մի քանի երգ և ուղերձներ աշակերտաց կողմանէ, և այսպէս այս համեստ միանգամայն միտքարուական հանդէսը վեհա. Հայրապետի Պաշտպանիչ կնքուեցաւ և հանդիսականք ելան ի ճեմարան՝ աշակերտաց աշխատասիրած ընտիր նկարները նկատելոյ համար :

Ահաւասիկ գերա. վերատեսուչ ընթերցած ճառը, որոյ վերջում կարեմք Մաղթանքէն զինի ի վեհարանի և ճեմարանի առջև կարգացուած միւս ճառերը և երգերը ի տեղեկութիւն

և ի միտքարուելուն մեր հեռաւոր և մերձաւոր եղբարց :

ՎԵՀԱՊԼՈՒ ՏԷՐ, ՍՍՏՈՒԱԾԱՐԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

Մինչդեռ լերինք Արարատեան նահանգին և հովիտք վասպուրական աշխարհին բոմբիւն ահագին և դժբաղդաւուն սոսկալիս հանցեցանք շուրջանակի, և արեան ճապարկք հանդէպ իւրեաց ընթացաւ առեալ ծաւալին ընդ երես դաշտերէնց Բաղրի անդոյ, զինչ այս տեսարան զուարդարար որ ձերովդ հրամանաւ բացեալ կայ արգ առաջի մեր : տեսարան՝ յորում հանդիսացեալ երեւին առաջի աշխարհի և յայս նըւաղ տարեւորական արգիւնք վաստակոյ որդեգրելոյ Ձերումք վեհափառութեան մանկանց Հայաստանի : Եւ որ պատրաստեացն մեզ զայս տեսարան հրաշալի ոչ այլ ինչ բայց եթէ ցուպ Ձեր Հովապետական և գաւառան առաջնորդական միակ միտքարուելու ազգիս տառապելոյ, եթէ ոչ ներկայիս անթերի բարեբաղդութեամբ, գէթ ապահեացն կրօնական և բարոյական յառաջագիտութեանց անխառն անկախութեամբ :

Փանդի բոլորեցաւ առաջիկ առաջին տեսնամեայ շրջան յորմէ հետէ Աստուածայնոյ տեսնութեան ինամք ետուն ի ձեռս Հովապետի տիգ մեծի զոյգն զայն և զգաւալուն՝ զնմանեալն Մովսիսական սքանչելադորձ գաւառանին, և հրամայեցին հորդան տալ նոքօք ի վայր դալարիս դեռաբողբոյ մարգաց և մարմնեղից բերաւոր մանկաւոյն, և առ Վուրս հանգստեան ճշմարիտ Աստուածապաշտութեան և ողջամիտ վարդապետութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ, անուցանել զլուսակիցն դաւիթս դուշակեալ մեզ ի լուսատուէն հոգւոյ մերոց ի Գրիգորէ Պարթէ :

Ձայալիտ ունելով իմ զուաշխու հանդէս ճոխ և մեծահոյս, պարտ և արժան է արգարե շուրջայն առնել զփոր և զամբոխումն մարգալտոյ մարտից և հակառակութեանց, և ի մին և եթ զակն պիշ ունելով ի կէտ նպատակի, ի դիտեալն ի ձերմէ հեռաւոր իմաստութեանց, զայն միայն կարճ ի կարճոյ պարզաբանութեամբ առնուլ ի ընթին եթէ իցէ արգեօք նշոյլ յուսոյ անկախութեան ժաման ինեղ երբէք ձերումն այսմ դատարարութեան ի նպատակ անդր, և այն որպէս վեհա. Հայրապետ, այս ամբոյրդ է հանդիսաւոր բացման ճեմարանի մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի, և Ձերք վեհափառութիւն հրաման տայ մեզ բանալ այսօր ի սմին դեռաւորան հինգերորդ, յոր հրաւիրին յառաջագիտեցն յաշակերտաց չորրորդի դատարարին՝ վերտեսնելով յատկաւ բարձրագոյնիցն ըստ մերում նախադի մակարութեանց : Արդ եթէ ճշմարիտ իցէ ասացուածն իմաստնոյ, որպէս և է իսկ, թէ բարեգուշակն սկզբնաւորութիւն կէս է դործոյն, ապա ուրեմն և կէսս այս բարեգուշակն զբաւական է անստերիւր ընթացից և ժաման ինեղ յամբողջ գործոյն, և վախճանին ցանկաւոյ :

Կէտ նպատակի ճեմարանին՝ ի Ձերմէ վեհափառութեանց սահմանեալ, առ որ դիմէ տեսնոր անխնայ եռանդեամբ տեսնութիւն ճեմարանիս, զինչ այլ ինչ իցէ՝ վեհափառ Տէր, եթէ ոչ զոր արգ իսկ հանցեցոյք գեղեցիկ նկարագրել ի լուր պատկաւելի միաբանութեան և բազմութեան հանդիսականաց աստէն ակմբեւոյ, այն իսկ է պատրաստել կազմել հովիւս և պաշտօնեայս Հայաստանեայց եկեղեցւոյ ընտիրքս, և բարեկիրթ վարժեալ բազում, որոց մեծագույն կարօտի ազգս մեր և եկեղեցի : Հիմն և հաստատութիւն առաջնոցն կրթութեան ողջին է լուսաւոր աստուածապաշտութեան և ողջամիտ դատարարութեան մանկաւոյն յատկաւ ինչպէս հոգն և նորոց իսկ երկրորդի կարգին, վարժապետաց ասեմ և ուսուցչաց հմուտ լի և անթերի տեղեկութիւն ոչ միայն ուսանելեացն իստու թաղութեան, այլև մանկավարժականին արուեստի՝ ըստ բազմափորձ առաջնորդութեան Եւրոպականացն ուսումնարանաց և իմաստուն առաջնորդաց նոցին :

Եւ քանզի որ ինչ արգասիք բարեաց երեւցան մինչև ցայսօր ժամանակի յեռմտայն ընթացաւ ճեմարանիս՝ յիշատակեցան առ յինչ յայլում նմանօրինակ պատեհի, մնայ մեզ արգ ի զին կալ վայելի մի նորումն ևս տեսարանի կան տարւոյս ի գնացաւ աշակերտաց չորրորդի դատարարին մերոյ, իւր արգ՝ մինչև զվոյ միայ ի ժրջան ասնոցք ի մէջ ածեալ զյառաջագիտ. զարգացմանցն տարիճանոյ զայն առիւտս սեղօման բարեաց՝ որ մեծագույն պայծառութեամբ ցոյցեալ փայլ արձակեաց ի ճակատ հոյակապ ճեմարանիս, և զուարթ ազոյնս այնու կացոյց զմեզ ի ջան և ի վստակ ըստ մերով :

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՆՈՒՄԻ

Տօնախմբութեան անուան վեհա. Հայրապետի ազգիս Տ. Տ. Գեորգայ Գ. և երրորդ տարեդարձ բացման ճեմարանի սուրբ Էջմիածնի : (1)

Նորին Սրբութեան Տ. Տ. Գէորգայ Գ. վեհա. Հայրապետի ամենայն Հայոց Անուան տօնախմբութեան և Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի Գէորգայ :

(1) Գաղափար յԱՐԱՐԱՏ ամսագրոյ :

անհն կարի և չափու՝ յառաջիկայիցն աշխատա-

սիրութիւնն :

Քանզի ձերովդ բարեհաճ տնօրէնութեամբ

հրաման եղև մեզ յայսմ ամի զհետ տարեւորա-

կան հարցաքննութեանց եղելոց յամենան յու-

նիսի, շնորհել զարձակուրդ աշակերտեցն չոր-

բորդի զաստարանին մերոյ եօթնևտասն աշակեր-

տաց յիւրաքանչիւր հայրենի աշխարհս և ի

տունս, և այս ի կազդուրումն առողջութեան

նոցա, ևս և ի սփոփանս աղգտկանաց նոցին և

մարձաւորաց : Եւ արդիւնք այսր հայրախնամ

շնորհի վեհափառութեան Ձերոյ առ արժանա-

ւորագոյնս ի ձերոցդ ամենուց զի՞նչ. ոչ թու-

լութիւն ի գնացս բարիս և ի ջանս ուսումնա-

լութեան, ոչ գայլթակութիւն տեսողաց

սիրութեան, ոչ քաղաքական և պարտաւարտաց, և

նոցին և բարեխիղացն և պարտաւարտաց, և

ոչ առեւտրածս ինչ բերել բնաւ տնտեսն ճեմա-

րանիս. քան և մի լիցի երբէք. այլ մանաւանդ

խրախոյս քաջաբերութեան և յաւելումն ուսում-

նախորդութեան, և բարեկիրթ քաղաքավարու-

թեան, և ընդ նմին պեղեցիկ հոշակ համբա-

ւոյ բարեկարգութեան ճեմարանիս լընդհանու-

րըս ծաւալեալ, և որոց զհետ այնր դասու գան

աշակերտաց՝ արդարացի խթան քաջաբերու-

թեան նմանողս լինելոյ նախորդացս իւրեանց,

զի և սոցին վայելից ի շնորհս հայրադուծ խնա-

մաց վեհիդ բոտ այսմ մասին լինելոյն յառաջի-

կայն արժանաւորք, զորօրինակ յայս նուագ-

երթեայքն ի Վարաբաղ, ի Ղլար, ի Նորնա-

խիլեան, յԱխալցեա, յԻկաթի և յԱղէքսանդ-

րուպոլիս, որք և ուսհասարակ ի դարձ այսրէն

փութացեալ մասդիւր սիրով և եռանդագինս

ևս քան զառաջինն սկիզբն արարին աւասիկ

ուսմանց իւրեանց յառաջմէ օրէ ամսոյս, ընդ

իւրեանս բերելով զուզցն, որպէս բանիս կարգ-

է ստել, յայս տապան հրաշակերտ առ Նահա-

պետդ իւրեանց իբրև զչիւղ ձիթեանոց զարդ-

մատենիկն ընծիւղ իմաստութեան և լուսաւո-

րութեան : Թերևս լեալ իցեն ոմանք յիմաստ-

նոց մերոյ ժամանակիս՝ որք ոչ բոտ բաւականին

աղատամիտս գտին զաշակերտս ճեմարանիս,

այլ մանաւանդ երկիւղածս կարի յոյժ յԱստու-

ծոյ և պատկառոտս ի մարդկանէ, այլև կարի

իմն սիրովս գրաստական բնիկ լեզուին Հայոց և

Տեր Առաքեալ Միքայել, յերեւան, Տեր Գրիգորեան Յովնանէս, ի Մեղրի գեղջի, Տեր Յովնանէսեան Աբել, յԱգոխ գեղջի Վարաբաղու, Տեր Պետրոսեան Յովնէսի, ի Մեծ Վարաբիլիսե աւանէ, Տեր Վրդանէսեան Քրիստափոր, յԱղբիւսնայոյտ :

Երկրորդ անգամ շնորհակալութիւնս յԱռաքեալ Միքայել, ի Ղլարի, Համագայեան Գրիգոր, յԵրեւան, Յակոբեան Արմենակ, յԱղբիւսնայոյտ, Տեր Յակոբեան Տիգրան, ի Տաթևի :

Յերկրորդ դասարանէն յերրորդն փոխադրեցան Առաջնախմբի անդամք :

Աստուծոյ Տիգրան, յԵրեւան, Գրիգորեան Ռաֆայել, ի Դաւթիք, Զամինեան Աբրահամ, ի Նոր Նախիջեանէ, Թամագեան Յովնանէս, ի Ստամբուլի, Մայիսեան Վարապետ, յԱխալցեալ, Միսնեան Վահան, ի Վաղարշապատ, Պեթարեան Յակոբ, յԱնթրակի Կիլիկիոյ, Պողոսեան Հայրապետ, ի Դաւթիք, Սաֆարեան Համբարձում, ի Դաւթիք, Սաֆարեան Տիգրան, ի Նոր Արմաւիր, Սոքրիսեան Խարոնդիմես, յԱխալցեալ, Փափագեան Գրիգոր, ի Վան քաղաքի, Բարամեան Նիկողայոս, ի Շամախոյ :

Երկրորդ անգամ շնորհակալութիւնս յԱռաքեալ Միքայել, ի Վաղարշապատ, Սիվագեան Գեորգ յԱխալցեալ գեղջի, Միսնեան Գեորգ, ի Կ. Պոլսոյ, Սրմաքեան Մեդան, յՕրդապարե Խորմու, Վարդանեան Առաքել, ի Վաղարշապատ, Բարամեան Ալեքսան, ի Վաղարշապատ :

Յերրորդ դասարանէն յերրորդն փոխադրեցան Առաջնախմբի անդամք :

Սիվագեան Գարուբիւն, յԱխալցեալ գեղջի, Առաքեալ Յովնանէս, ի Հին Նախիջեանէ, Սիլեան Սիսաք, ի Վաղարշապատ, Աստուծաբեան Միքայել, յԱղբիւսնայոյտ, Զարկարեան Աւետիս, յԱգոխեալ, Զարարեան Թադեոս, ի Շամախոյ, Թումանեան Պաւլոս, ի Մոզուր, Խոսրովիւսեան Հմայեակ, ի Տրապիզոն, Կեօնեան Ենովք, յԱղբիւսնայոյտ, Սահակեան Պողոս, ի Տիֆլիս, Ստամբուլեան Համբարձում, յԱղբիւսնայոյտ, Ստեփաննոսեան Հայրապետ, ի Տիֆլիս, Տեր Գաբրիէլեան Սարգիս, ի Բուրսայիս, Տեր Մկրտչեան Կարապետ, ի Սիվակեալ, Տեր Պողոսեան Պողոս, յԱղբիւսնայոյտ, Տեր Սարգիսեան Յովնանէս, ի Նորնախիջեանէ :

Երկրորդ անգամ շնորհակալութիւնս յԱռաքեալ Միքայել, ի Շոշուոյ, Յարութիւնեան Սահակ, ի Կ. Պոլսոյ, Շահինեան Վահան, ի Կիլիկիոյ գեղջի, Տեր Անտոնեան Ստեփաննոս, յԵրեւան, Տեր Բարքուղիմէոսեան Գեորգ, ի Պրուսայի, Տեր Գաբրիէլեան Միքայել, ի Սալեթեք աւանէ, Տեր Գաբրիէլեան Յովնանէս, յԱղբիւսնայոյտ, Տեր Ստեփանեան Թադեոս, ի Բուրսայի գեղջի :

Ի չորրորդ դասարանէն ի Հինգերորդն փոխադրեցան Առաքեալ Գաբրիէլ, ի Ղլարի, Գրիգորեան Սեդրակ, յԱղբիւսնայոյտ, Զարարեան Մկրտիչ, յԵրեւան, Խոսրովեան Յովնանի, ի Շոշուոյ, Խանքեան Գեորգ, ի Նորնախիջեանէ, Հախումեան Սիմեոն, ի Շոշուոյ, Մայիսեան Ստեփաննոս, յԱխալցեալ, Մեղիքեան Բաղդասար, ի Ղլարի, Մամիկոնեան Մուշեղ, յԱղբիւսնայոյտ, Մեղիք Շահնագարեան Կոստանդին, ի Շոշուոյ, Մկրտչեան Ստեփան, յԵրեւան, Շահարչեան Աղեքսանդր, յԵրեւան, Պանոսագեան Սիմեոն, ի Ղլարի, Սամարեան Սեդրակ, ի Նորնախիջեանէ, Սողոմոնեան Հմայեակ, յԱխալցեալ, Տեր Աւետիքեան Նիկողայոս, ի Շոշուոյ, Տեր Մկրտչեան Պաւլոս, յԱխալցեալ :

Եւ մնալ յառաջմէն դասարանէն անգամ շնորհակալութիւնս յԱղբիւսնայոյտ, ի Պորագալու գեղջի, Խանագեան Սարգիս, ի Զայալոյտ աւանէ, Մամեան Ստեփաննոս, ի Տիֆլիս աւանէ, Տեր Մկրտչեան Գարուբիւն, ի Շոշուոյ գեղջի, Տեր Յովնանիսեան Ղուկաս, ի Հին Եփեսոս գեղջի, Փարոսեան Յովնանէս, յԱխալցեալ :

Իսկ նորամուտ աշակերտացն թիւ ի մին աւար-

ւոյ եղև երեսուն և երեք :

Յորոց 21 մասն յԱ. դասարան, 8 » յԲ. դասարան և 4 » յԳ. դասարան :

Եւ այսպէս թիւ համօրէն աշակերտաց ճեմա-րանիս յաւելաւ յայսմ ամի մինչև ցհալիս և հնգեպսակ : Եւ թէպէտ այլ ևս հարկւրաւորք յամենայն քաղաքաց և ի գիւղօրէից հեռաւո-րաց և մերձաւորաց տնեցան և փափագին այսմ բարեաց. սակայն անձկութիւն տեղոյն բնա-կութեան ճեմարանիս խափան եղև ցայսօր բա-րեւաղգութեան նոցին : Այնու ամենայնիւ հան-դերձ՝ յոյս մեծ է ապագէն, յՎեհափառ Տէր, թէ ոչ թերակատար թողցէ Աստուած և զայն ճիգն եռանդեան Հայրապետիդ մերոյ, որով ընդարձակել ցանկայք զճեմարանս զայս՝ մինչև բաւական լինել ի բնակութիւն 150—200 աշա-կերտաց՝ որք մտադիւր յօժարութեամբ այսր գիմեալ գայցեն յամենայն աշխարհաց՝ յորս բնակացեալ կամ պանդխտեալ դասին հայ-կազն ժողովուրդք մեր :

Առ ձեզ ապա դարձցին բանք իմ, ո՞հ հայկո-սերունդ ժողովուրդք մեր որ ի սիւրբ առ Երեւանիս, և որք հեծէք հառաչէք և յուզոց հանէք աղղափարաբար և անկեղծաւօր մտօք ընդ բիւրապատիկ աղէտս տարակուսի յորս ըն-կղմեալ դասնի ի տեղիս տեղիս աղգս մեր առ հասարակ, սրբեցէք առ վայր մի դարտասուս յաչաց ձերոց, զի նշմարեցէք զբազմաբարեան իղձս ձեր եթէ ոչ արդէն կատարեալս, դէթ ի կատարումն կոյս ընթացեալ, շնորհիւ վեհա-Տեառնս մերոյ, ոչ ևս երկմեալ վարանիք դուք որպէս երբեմն ընդ Նախաւորութիւն և ընդ շահաբեր օգտակարութիւն այսպիսոյ ճե-մարանի, և կայծակունք յուսոյ տակաւ արծար-ծին յողիս ձեր և ի միաս թէ եկեցէ նոր ու-րեմն դարձեալ միւսանդամ ժամանակն ցան-կալի յորում գետահեաեալ յորդեանցն իմացր Աթոռոյ աստի իբրև յառատահոս աղբերէ, և ընթացեալ արեւուցեն զՀայաստան ժողովուրդ-վտակը ի շնորհաց Աստուծային և մարդկային գիտութեանց : Եթէ իցէ ինչ աղբ ամենեցուն մեզ ըզձալի և ուխտիւք փափագելի՛ այս միայն է ապագէն՝ զի զանգրդուելի իմն առցէ սա-այժմէն զհաստատութիւն և զանայթաք յառ-աջադիմութիւն, իսկ առ այս երկու ինչ խնդ-րի առ ի ձէն՝ օժանդակութիւն, մի՛ զի նմա-նողս լինիլիք այնոցիկ ի վեհանձն բարեւարաց ճեմարանիս, զորոց և ի հերուն արարաւ յիշա-տակութիւն յայսմ հանդիսի, եթէ ոչ միշտ մե-ծագումար օժանդակութեանց նուիրմամբ դէթ բոտ իւրաքանչիւր կարողութեան և եռանդ-եանդ չափու, յուշ ձեզ՝ աւետարանականն ճշմարտութիւն՝ զի և լուսնայեցն երկուց նուիրա-բերութիւն ի դանձանակ Հայաստանեայցս Եկե-ղեցոյ, ոչ խոտեցի երբէք յարդարակիւն դա-տաւորէն : Երկրորդ անգամ, զի յաճախեցէք ընդ մեզ յաղօթս և ի պաղատանս սրտառուչս առ բարձրեալն Աստուծ, զի հաճեցի շնորհել աղղիս այլ ևս ամս յորով զմեծագործ Հիմնա-դիր սրբին զՀայրապետս մեր պատուական, հզօր պաշտպանութեամբ անուանակցին իւրոյ սրբոյ՝ Գեորգայ քաջամարտիկ զօրավարի, և բա-րեխօսութեամբ սրբոց Հայրապետացն մերոց Սահակեանց և Մեսրոպեանց :

Քաղաքիս Ս. Մեսրոպեան և Հռիփսիմեանց աղղային վարժարանաց քերականութեան դա-տաւորութեան օրինակ մի յառաջ կրբերմաք,	
յորմէ խոհական ընթերցողն կրնայ իմաստասի-րել հայերէն լեզուին ուսման հերթն երկուց սեռից յատկացեալ յիշեալ վարժարանաց մէջ :	
Եղակի,	Յոգնակի,
ուղղական հայր	ուղղական հայրեր
սերական հայրի	սերական հայրերու
տրական հայրի	տրական հայրերու
հայցական հայր :	հայցական հայրեր :
Եղակի,	Յոգնակի,
ուղղական՝ որդի	ուղղական՝ որդիներ
սերական՝ որդիի	սերական՝ որդիներու
տրական՝ որդիի	տրական՝ որդիներու
հայցական՝ որդի :	հայցական՝ որդիներ :

